

Ն. Թումանյան

Վ. ՏԵՐՅԱՆԸ ԵՎ Ն. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջները» լույս տեսնելու առթիվ Թումանյանը ասում է. «Վահանը հանդես եկավ մեր բոլոր պոետներից ամենից կաղմակերպված ձևով»:

Թումանյանն այդ ապավորությունն ստացել էր 1908 թվի զարնանը Տերյանի անտիպ երկերի առաջին ընթերցումից հետո, երբ Տերյանը, որպես սկսնակ բանաստեղծ, ծանոթանալով Թումանյանի հետ, Վերնատանը կարդում է իր «Մթնշաղի անուրջները» ժողովածուից մի շարք անտիպ բանաստեղծություններ: Թումանյանը ողջունում է նրան որպես իսկական բանաստեղծի և հայտնում, որ նա կարող է պատվավոր տեղ ունենալ Վերնատանը:

Տերյանը իր ընդերքներից մեկին գրում է հետևյալը. «Լեռնի դասախոսության ժամանակ (ապրիլի 25-ին) ծանոթացա Թումանյանի հետ, որ թարգմանել է (և, ինչպես ասում են, հիանալի կերպով) Իլիա Մուրոմեցը»:

Իր այդ նամակում Տերյանը բերում է Թումանյանի հետևյալ խոսքերը. «Դուք ավելի լավ եք սկսում, քան թե մենք: Ես նկատում եմ, որ այստեղ մեղավորը ժամանակն ու պայմաններն են: Ընթերցողի համար դա նշանակություն չունի. երբ իբր ընթերցող վերցնում եմ մի գիրք, ուղում եմ, որ նա բավարարություն տա իմ պահանջներին, ես պարտավոր չեմ հաշվի առնելու նրա ստեղծագործության պայմանները»:

Թումանյանի արտահայտած կարծիքներն իր նամակում մեջ բերելուց հետո Տերյանն ավելացնում է. «Մի բան, որ ինձ քիչ հաճույք չպատճառեց, Հովհ. Թումանյանի, թեև զսպված, սակայն համակրական վերաբերմունքն էր իմ դրվածքների, տպագրվածների վերաբերյալ»:

Երկու բանաստեղծների առաջին հանդիպմանը ներկա է եղել Վահան Տերյանի եղբայրը՝ Ջավախեցին, որն իր հուշերում այդ հանդիպման առթիվ գրում է.

«... Այնուհետև Վահանն ու Հովհաննեսը մտերիմ բարեկամներ դարձան, ու մեր գրական գործիչներից ես չեմ ճանաչում որևէ մեկին, որին Վահանը այնքան սիրեր ու հարգեր, որքան Հովհաննես Թումանյանին, որին հայոց Պուշկին էր անվանում»:

Տերյանը և Թումանյանը երկրորդ անգամ հանդիպել են Մոսկվայում 1912 թվի մարտին, երբ Թումանյանը Պետրոգրադից Թիֆլիս վերադառնալիս, Հայագիտական ֆոնդը կաղմակերպելու գործով մի քանի օր մնում է Մոսկվայում: Այդ օրերին տեղի գաղութը և գրողները՝ Ալ. Ծատուրյանը, Վ. Տերյանը, ռուս գրողների և գրականագետների հետ միասին, ի պատիվ Թումանյանի երեկույթ են կաղմակերպում:

Տերյանի նկատմամբ Թումանյանը հայրական վերաբերմունք ուներ-

Ուրում էր նրան և բարձր կարծիքի էր նրա պոեզիայի մասին: Տերյանը Թումանյանի այդ վերաբերմունքը շատ թանկ էր գնահատում. իր նամակներից մեկում նա այդ առթիվ գրում է. «Ընձ խորապես հուզում է Ձեր բարի և բարեկամական վերաբերմունքը և Ձեր սիրելի հովանավորությունը «ի սկզբան»¹ ևս ընդունել եմ իրրե անգնահատելի և բարձր պատիվ»:

Տերյանի և Թումանյանի հանդիպումները հաճախակի դարձան 1914 և հետագա տարիներին, երբ Տերյանը Պետերբուրգից Թիֆլիս էր գալիս իր արձակուրդի ամիսները Թիֆլիսում կամ Գանձայում անցկացնելու: Տերյանը նոր էր ավարտել Մոսկվայի համալսարանի պատմա-լեզվագիտական ֆակուլտետը և որպես ուսանող փոխադրվել էր Պետերբուրգ պրոֆ. Մաուի մոտ Արևելագիտական ֆակուլտետը: Նա մեծ ոգևորությամբ ուսումնասիրում էր արաբերեն, պարսկերեն և վրացերեն լեզուները:

Այդ տարիները Գրողների Ընկերության դրական երեկոյթների հետաքրքրական շրջանն էին: Թումանյանը, որպես Ընկերության նախագահ, շարունակ զբաղված էր լինում երեկոյթներ կազմակերպելու գործով, Ընկերության, վարչության և ընդհանուր ժողովներով ու ընթացիկ գործերով:

Տերյանը ինքն էլ նույն վերաբերմունքն ուներ զեպի գրական-հասարակական կյանքը. այդ երևում է իր գործունեությունից և Տերյանի մի նամակից՝ ուղղված Թումանյանին, իրեն Գրողների Ընկերության անդամ ընտրելու առթիվ: Այդ նամակը բերում ենք ստորև.

«Ստացա և ուրախությամբ կարդացի հարգո Վարչությանդ գրությունը, որով հայտնում են, որ Հայ Գրողների Ընկերության ընդհանուր ժողովը պատիվ է արել ինձ Ընկերության անդամ ընտրելու: Թույլ տվեք հանձինս Ձեռ հայտնելու համակրելի Ընկերության հարգելի անդամներին իմ ամենախորին ու ջերմ շնորհակալությունը: Կուզեի հավաստիացնել Ձեզ, որ իմ ուժերը ներածին չափ պիտի ցանամ անօգուտ ու անպետք անդամ չլինելու ընկերության, որի առաջադիմությանն ու առողջության նպաստելը ամեն գրասեր հայի պարտքը պետք է համարել:

Ընդունեցեք ամենախորին հարգանքս:

Ձեր վահան Տերյան

1914, հունվարի, Ս. Պետերբուրգ.

Տերյանին վրդովում էր մամուլի անբարյացակամ վերաբերմունքը զեպի Գրողների Ընկերությունը և գրականագիտությունն առհասարակ, զեպի Թումանյանը:

Թումանյանի զեմ հրատարակված ամեն մի հոդված վիրավորում էր Տերյանին, նա այդ համարում էր գրականության վիրավորանք և իր բողոքն ու վրդովմունքն արտահայտում էր թե հրապարակով, թե մասնավոր նամակներով: Իր ընկեր գրականագետների հետ երկու անգամ հրապարակով իր բողոքն է հայտնել այդ առթիվ:

«Ժիշտ չէ, — գրում է Տերյանն իր բողոքում, — թե հասարակությունը անտարբեր է գտնվել հայ էջերի մեծ գրողին հասցրած անլուր վիրավորանքների հանդեպ: Թող հայտնի լինի, որ հայ ժողովուրդը հավիտյանս պարտական պիտի մնա Թումանյանին: Ոչ մի հայհոյանք չպիտի կարողանա

¹ Տերյանի նամակը Թումանյանին, 1913 թ. նոյեմբերի 12:

մթազնել մեր գրականության կարմիր արևը: Նա կփայլի, քանի կենդանի է մեր ժողովուրդը և սրա մահից հետո ևս:

Թեև Տերյանը և Թումանյանը փոխադարձ սիրով էին կապված միմյանց հետ, բայց հաճախ վեճի էին բռնվում, երբ խոսքը լեզվի կամ ոճի շուրջն էր լինում: Տերյանը իր գրական կյանքի առաջին շրջանում մեծ տեղ էր տալիս խոսքի երաժշտությանը, բանաստեղծության հնչյունականությանը:

Թումանյանն էլ, թեև արվեստին, երաժշտությանը մեծ տեղ էր տալիս, բայց ասում էր՝ բանաստեղծը գրելու ժամանակ հանգի և հնչյունի հետևից չպետք է ընկնի, ընտրի ու փնտրի: Նույնը և լեզվի խնդրում: Թումանյանը ժողովրդից էր գալիս, ժողովրդի լեզվով էր խոսում և ժողովրդական ոճեր ու ձևեր օգտագործում, Տերյանն, ընդհակառակը, ժողովրդական ձևերից հեռանալով՝ զուտ դրական լեզվին էր դիմում: Այդ էր պատճառը, որ Թումանյանը ափսոսանքով էր նկատում, որ Տերյանը չի օգտվում ժողովրդական լեզվի անհուն գանձերից:

Թումանյանը հաճախ է Գրողների Ընկերության երեկույթներին բարձր կարծիք հայտնել Տերյանի մասին:

«Ահա ձեր առջև նստած է նորագույն բանաստեղծության փայլուն ներկայացուցիչը, — Վահան Տերյանը, որի երգերը կարող ենք պարծանքով հանել ողուսաց նորագույն բանաստեղծներից ամենալավերի դեմ և որին հրճվանքով ողջունում եմ Հայոց Գրողների Ընկերության անունից»:

Մի այլ առիթով, Գրողների տանը, Տերյանին նվիրված երեկույթին Թումանյանն ասում է. «... Ինչպես ամեն բանաստեղծի, այնպես էլ Տերյանի լավ երգերն առեք և բանաստեղծական գոհարներ կտեսնեք, որոնք ձեզ բարձր գեղարվեստական հաճույքներ կտան»:

Տերյանն էլ իր հերթին, թեև լեզվական որոշ խնդիրներում համաձայն չէր լինում Թումանյանի հետ և մերժում էր նրա էս ու էնը, — սակայն, բարձր կարծիքի էր ինչպես Թումանյանի լեզվի, այնպես էլ արվեստի մասին: 1914 թվին Տերյանը գրում է. «Այսօր Թումանյանը իր լեզուն հասցրել է այն բյուրեղացման, պարզության, որ մոտեցնում է նրան Պուշկինին և որը նրա գերագույն արժանիքներից մեկը պիտի համարվի»:

Տերյանը Թումանյանին համարում էր «հայ ժողովրդի հայրենի վշտի երգիչը և հայրենիքի արտահայտիչը», «մեծ գեղարվեստագետ և ժողովրդական ոգու իմաստուն և զսեմ թարգման»:

Տերյանը Թումանյանի մեծագույն արժանիքներից մեկը համարում էր նրա սերտ կապը ողուս կլասիկ գրողների հետ և առհասարակ նրա ողուսական օրինատացիան:

«Եվ մեր օրերի մեծ պոետը չէ, որ բերում է մեզ մոտ ողուս հոգու ամենաբնորոշ արտադրությունները — Պուշկինը և բիլինան, Լերմոնտովը և ժողովրդական հեքիաթը»:

1916 թվին Տերյանը գալիս է Թիֆլիս և բերում իր «Երկիր Նայիրի» անտիպ ժողովածուն: Մտածում էր այն հրատարակել: Երբ խոսում է Հայաստանից և հայ ժողովրդից ու չէր կարողանում իր միտքը լրիվ արտահայտել, նա ասում է. «Այ, երբ իմ «Երկիր Նայիրի»-ն լույս տեսնի, այն ժամանակ ինձ կհասկանան»: Այդ ժողովածուից նա մի քանի բանաստեղծություններ կարդում է Թումանյանին:

Իր նամակներից մեկում իր այդ վերջին բանաստեղծությունների

առթիվ Տերյանը գրում է. «Եթե վիճակվի ինձ երկրորդ հատորս հրատարակել, այնտեղ դուք կգտնեք «Երկիր Նայիրի» վերնագրի տակ, Պատերազմից հետո գուցե հաջողվի ինձ լույս ընծայել գիրքս»:

1914 թվի պատերազմը և նրա հետևանքները՝ դաղթը, կոտորածը, ավերը ազդում են նրա վրա: Դժգոհ այդ ժամանակներից, նա ապրում է ոսկեշող գալիքի հույսերով, ջերմ բաղձանքով, բաց սրտով ողջունելու գալիքը...

1916—17 թվականների ձմեռը Թոքախտի առաջին նշանները երևացին: Նույն թվականի դեկտեմբերի վերջերին նա մի քանի օրով գնում է Երևան, որտեղ կարդում է իր դասախոսությունը հայ պոեզիայի մասին և արտասանում իր «Հրաժեշտի գագեիլը»: Այնուհետև վերադառնալով Թիֆլիս, նա 1917 թվի սկզբներին մեկնում է Սուխում՝ բուժվելու, որտեղ մնում է շատ կարճ ժամանակ:

Ամառը վերջին անգամ նա գնում է իր հայրենի գյուղը՝ Գանձա: Վերադառնալով Գանձայից՝ նա մեկնում է Մոսկվա:

Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ուղուցիան նոր ուժ ու եռանդ է ներշնչում Տերյանին. աշխատելով Ազգությունների համիսարիատում, անմիջապես մեծ Ստալինի ղեկավարությամբ, նա պայծառորեն տեսնում է հայ ժողովրդի նոր կյանքի ուղին, լծվում այդ նոր կյանքի կերտմանը, հայերենի թարգմանում Վ. Ի. Լենինի «Պետություն և ուղուցիա» աշխատությունը, երգում նոր հասարակարգը:

В. Терян и Ов. Туманян

Р е з ю м е

В этой статье говорится о взаимной дружеской связи и любви двух поэтов разного поколения—молодого В. Теряна и Ов. Туманяна.

Отмечается высокое мнение Туманяна о начинающем поэте при первом знакомстве с поэзией Теряна (1908 г.). При дальнейших их встречах (1912, 1914—1917 гг.) это знакомство выливается в тесную дружбу.

Хотя их творчество, как по содержанию, так и по форме, разного направления и характера, но все же их любовь и симпатия была взаимна.

В Терян в свою очередь глубоко уважал Туманяна, высоко ценил его творчество и неоднократно активно выступал в печати против всяких несправедливых нападок на Туманяна.

Статья заканчивается описанием последних дней Теряна в Ереване и общественной деятельности большого патриота в Москве с первых же дней советской власти.